



«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Taxpayers Rights Protection» Public Organization

ք. Երևան, 01.02.16 թ.
Ելք № 006

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք Ձեզ, որ 2016 թվականի հունվարի 1-ից հաշվարկային փաստաթղթերը բացառապես էլեկտրոնային եղանակով դուրսգրելու օրենսդրական պահանջը բազմաթիվ հարցադրումներ է առաջացնում հարկ վճարողների շրջանում, որոնց որոշ մասի կիրառության վերաբերյալ պարզաբանումներ ներկայացվել են, իսկ որոշ հարցադրումների մասով մոտեցումներն անորոշ են:

Այդ կապակցությամբ կից Ձեզ է ներկայացվում հարկ վճարողի գրությունը և խնդրում ենք պարզաբանել բարձրացված հարցերին:

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թադևոսյան

1. Մանրա-մեծածախ առևտրով զբաղվող ընկերությունը ֆիզիկական անձին կանխիկ դրամով վաճառում է ապրանք, որի համար վերջինիս իր խանութում գումարը ստանալուց տրամադրում է ՀԴՄ կտրոնը, և պարտավորվում է հնարավորինս սեղմ ժամկետներում իր պահեստից, որտեղ գտնվում է տվյալ ապրանքը, առաքել այն գնորդի նշած հասցե: Պահեստն ու խանութը իրարից աշխարհագրորեն հեռու են գտնվում և տնտեսապես ձեռնտու և հարմար էլ չէ ամեն անգամ նման առաքում կատարելիս գնորդին տրամադրված ՀԴՄ կտրոնի կրկնօրինակը տանել պահեստ, որպեսզի այն առաքման ժամանակ ընկերության համար ծառայի որպես ուղեկցող փաստաթուղթ: Մինչ 2016թ-ը նման դեպքերում առաջնորդվելով Հարկերի մասին ՀՀ օրենքի Հավելված 4-ով՝ «ՀՀ-ում առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների փաստաթղթավորման կարգ»-ով, դուրս էինք գրում հաշվարկային փաստաթուղթ գնորդի տվյալներից նշելով միայն ֆիզիկական անձի անուն-ազգանունն ու առաքման հասցեն: Համաձայն Հարկերի մասին ՀՀ օրենքի 15.1 հոդվածի վերջին պարբերության 2016 թվականի հունվարի մեկից սկսած հաշվարկային փաստաթղթերը (բացառությամբ հսկիչ-դրամարկղային փաստաթղթերի) դուրս են գրվում բացառապես էլեկտրոնային եղանակով՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով: Համաձայն այդ կարգի ֆիզիկական անձի տվյալները էլեկտրոնային լրացնելու համար անհրաժեշտ է սկզբում լրացնել վերջինիս անձնագրային տվյալները, այնուհետև անուն-ազգանվան համար դաշտը ակտիվանալուց հետո միայն գնորդ ֆիզիկական անձի անունն ու ազգանունը, առաքման հասցեն:

Հարց՝ ֆիզիկական անձանց կողմից կանխիկ գումարով գնված և ՀԴՄ ֆիսկալային հասույթում արտացոլված ապրանքները վերջիններիս առաքելիս որպես ուղեկցող փաստաթուղթ պարտադիր է էլեկտրոնային եղանակով հաշվարկային փաստաթղթերի դուրս գրումը, թե ոչ: Եթե այո, խնդրում եմ ասել նաև, որ եթե օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով չունենք գնորդ ֆիզիկական անձի անձնագրային տվյալները, ինչպես դուրս գրենք այդ հաշվարկային փաստաթուղթը, իսկ եթե ոչ, ապա ինչը կհամարվի ուղեկցող փաստաթուղթ, եթե առաքման ժամանակ ապրանքի հետ չլինի գնորդ ֆիզիկական անձին տրամադրված ՀԴՄ կտրոնի կրկնօրինակը:

2. Ինտերնետ խանութների միջոցով առցանց (online) վաճառքներ կազմակերպելիս, երբ ֆիզիկապես չկա խանութ՝ այն վիրտուալ տիրույթում ինտերնետ խանութ է, և չի էլ հասնում ՀԴՄ՝ գնորդը համապատասխան ինտերնետ-խանութ մուտք գործելով և այնտեղ իր նախընտրած ապրանքը պատվիրելով, վճարում է քարտով կամ անկանխիկ այլ եղանակով և

- գալիս վերցնում է իր ապրանքը, ուղեկցող փաստաթղթի մասով խնդիր չկա, սակայն անհրաժեշտ է ինչ-որ ձև ամրագրել հասույթը,
- ապրանքն առաքվում է իր նշած հասցեով՝ անհրաժեշտ է ուղեկցող փաստաթուղթ, իսկ համաձայն Հարկերի մասին ՀՀ օրենքի 15.1 հոդվածի վերջին պարբերության 2016 թվականի հունվարի մեկից սկսած հաշվարկային փաստաթղթերը (բացառությամբ հսկիչ-դրամարկղային փաստաթղթերի) դուրս են գրվում բացառապես էլեկտրոնային եղանակով՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով, ինչպես նաև յուրաքանչյուր գնման ժամանակ անհրաժեշտ են գնորդ ֆիզիկական անձանցից պահանջել անձնագրային տվյալները, ինչն էլ եթե նույնիսկ անհնար էլ չէ, գոնե կխոջընդոտի գործունեությանը՝ հնարավոր է որոշ գնորդներ հրաժարվեն գնումներից, իսկ մեկ անգամ գրանցված գնորդների անձնագրային տվյալները պահել չլիցենզավորված ծրագրերում արգելված է օրենքով:

Հարց՝ երբ առաքման խնդիր չկա կամ կա, սակայն չունենք վերջինիս անձնագրային տվյալները, ի՞նչ փաստաթղթով ամրագրել ընկերության հասույթը՝

- եթե գումարն ամբողջությամբ ստացել ենք անկանխիկ եղանակով, արդյո՞ք բանկային քաղվածքները բավարա՞ր են, թե ոչ:
- ի՞նչ փաստաթղթերով առաքել ապրանքը գնորդին և արդյո՞ք հաշվարկային փաստաթղթում անձնագրային տվյալների բացակայությունը չի համարվի սխալ և չեն կիրառվի համապատասխան տույժ-տուգանքներ:

3. Մինչև 2016թ-ը զբոսաշրջիկային գործակալությունների՝ օրինակ ավիատոմս, տուրիստական փաթեթ և նման այլ ծառայություններ մատուցող կամ գործակալության պայմանագրով աշխատող ընկերությունը իր գնորդ կազմակերպության պահանջով առաջնորդվելով ՀՀ օրենսդրությամբ, դուրս էր գրում հաշվարկային փաստաթուղթ, որը ընկերության հասույթի հաշվարկմանը չէր մասնակցում՝ ընկերության հասույթը այդ գործարքից իր ստացած միջնորդավճարն է, այլ ոչ թե ամբողջ գումարը, բայց միաժամանակ գնորդ կազմակերպության համար այդ հաշվարկային փաստաթուղթը հանդիսանում էր ծախսը հիմնավորող փաստաթուղթ: Համաձայն Հարկերի մասին ՀՀ օրենքի 15.1 հոդվածի վերջին պարբերության 2016 թվականի հունվարի մեկից սկսած հաշվարկային փաստաթղթերը (բացառությամբ հսկիչ-դրամարկղային փաստաթղթերի) դուրս են գրվում բացառապես էլեկտրոնային եղանակով՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով: Այս դեպքում այդ ոլորտում գործող ընկերությունը իր գնորդ կազմակերպության պահանջով պարտավոր է լինելու դուրս գրել էլեկտրոնային հաշվարկային փաստաթուղթ, որի մեջ նշված գումարի միայն մի փոքր մասն է լինելու իր միջնորդավճարը, իսկ իր հասույթը ձևավորվելու է ԱԱՀ մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան:

Հարց՝ Արդյո՞ք այսուհետև ևս էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր դուրս գրելու դեպքում հարկային մարմնի կողմից ընկերության համար հասույթը չի դիտվի այդ փաստաթղթերում արտացոլված գումարը ամբողջությամբ և օրինակ՝ շրջանառության հարկով աշխատող ընկերությունների համար այն օրենքով սահմանված շեմի գերազանցում չի համարվի: